

կտաք Վենետիկում որ ունենար գիտութեան այն պաշարը՝ արդի եւրոպական ուղիղ իմաստով ինչ որ օրինակ մի Մետրոպ վարդապետ ունի։— Ինչո՞ւ այդ գիտութիւնը չի գործադրուում կամ թուում է թէ չի գործադրուում։ Ինչո՞ւ ս. Էջմիածնի միաբանութեան գրական վաստակները այժմ եւս շատ աւելի պակաս են քան Վենետիկինը Դուք այն հարցըք ու այն քննեցէք. բայց Դուք ելնում ծայնակցում էք Բասմաջեաններին։ որոնց համար մանրավաճառութիւնն ու գիտութեամբ կամ գրականութեամբ զբաղուիլը միատեսակ արհեստներ են թէ ս. Էջմիածինը դժոխք է ու ս. Ղազարն արքայութիւն, եւ կարծում էք մեծ քան արիք՝ Էջմիածնի քոլոր պակասութիւնները մերկացրիք. հեռաւորը գովելով եւ մօտիկը պախարակելով անաշտ քննադատներ հանդիսացաք ու շատ զեղծումների առաջն առաք, խաբուածների աչքը բաց արիք։ Արդիւնքն ի՞նչ է սակայն. նոցա որոնք Ձեր ասածներին հաւատում են, պէտք է հաստատուին հետզհետէ այն նախապաշարման մէջ, որ Էջմիածնից ու հայ հոգեւորականից ոչինչ լաւ քան ելնել չի կարող. եւ պէտք է ուրեմն ծեռնածափ լինին նոցանից, ցանկան ու աշխատեն ծշտել Ձեր ասածները՝ արգելք լինելով կրկին եղած լաւ կողմերի զօրանալուն. իսկ նոքա որոնք Ձեր սխալ ու միակողմանի լինելը տեսնում են եւ հեշտութեամբ կապացուցանեն, թէ ինչպէս Դուք սպիտակն եւս սեւ էք ներկայացնում եւ միայն Ձեր ծայրահեղ կեցութեան շնորհիւ է, որ ահա տարիներէ ի վեր ոչինչ լաւ քան այլ եւս այստեղ չէք տեսնում՝ կարող են օգուտ քաղել դորանից եւ Ձեր ուղիղ դիտողութիւններն եւս կապակածելի դարձնել անորոշութեան մշուշի մէջ ծածկուած պահելով իսկական թերութիւնները։ Հաւատացած եղէք, որ իրականութեան մէջ այդպէս էլ լինում է. անպայման ժխտումն քննականաբար պէտք է նոյնպիսի ժխտում յառաջ բերէ։ Կուսակցական ոգուն յատուկ է ամէն տեղ հակառակորդի մէջ մոլել կողմեր որոնելն ու լուսաւորն անտես անելը. բայց ցան այն է, որ Դուք այդպիսի նեղ կուսակցական ոգով նայում էք ոչ միայն Ձեր իսկական ու երեւակայական հակառակորդներ

ի վերայ, այլ անձերն ու նոցա հետ կապ ունեցող հաստատութիւնները շփոթելով վերջիններիս դէմ եւս գործ էք դնում այն միջոցը, որով տապալել են կամենում։ մինչդեռ Դուք կամենում էք անշուշտ շինել ու քարհնորդել։ Մեր վերջին խօսքն ու խորհուրդն այս է. եթէ պահանջ էք զգում որ լրջութեամբ վերաբերուին դէպի Ձեր քննադատութիւնները՝ ինքներդ փոքր ինչ աւելի լուրջ, արդարամիտ, լայնսիրտ եւ քաղմակողմանի եղէք. ամէնից առաջ՝ աւելի պատշաճ լեզու գործ դրէք։

Կ. Վ.

ԿՐՕՆԻ ԷՌԻԹԻԻՆԵՐ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ
ՏԵՍԱԿԷՏԻՅ

Արարատի Յուլիս—Օգոստոս համարում մեր ծանօթացրինք ընթերցողներին մի նշանաւոր Աստուածաբանի կարծիքների հետ՝ քրիստոնէական կրօնի մասին. այժմ կամենում ենք մի հոգակաւոր փիլիսոփայի մտքերն ու դատողութիւնները նոյն կրօնի և առհասարակ կրօնների մասին ի մի ամփոփել, որպէս զի ընթերցողները տեսնեն, թէ ի՞նչ են մտածում ու խօսում կրօնի մասին 20-րդ դարու եւրոպայի լուսոյ այդ կենտրոնի պատուականադոյն ներկայացուցիչներն ու ազգայ սերունդ պատրաստող իմաստուն գլուխները։

Արարատի մէջ յիշուած էր, թէ ինչպէս երկու տարի առաջ Իենայի համալսարանի բնական գիտութիւնների ուսուցչապետ Հեքէլը (Häckel) իւր «Տիեզերքի հանելուկը» (Welträthsel) գրքով հանդէս եկաւ և մօնիսմուսը կամ աւելի ճիշտ՝ նիւթապաշտական համաւատուածութիւնը իբրեւ միակ ուղիղ աշխարհայեցողութիւն հոգակեց և դրանով մեծ ազմուկ հանեց. այժմ նոյն Իենայի համալսարանից յառաջ է բերուում մի նոր ուղղութիւն, բոլորովին հակառակ առաջինի, որի առաջնորդն ու քարոզիչն է անուանի գիտնական Բուկոբի Օյկէն (Eucken)։ Մենք թողնում ենք նրա ուրիշ խիստ հետաքրքրական աշխատութիւնները, որպիսիք են «Ներ-

այ ժամանակի հիմնական ըմբռնումները (Die Grundbegriffe der Gegenwart), Հոգեւոր կեանքի միութիւնը մարդկութեան գիտակցութեան ու գործի մէջ» (Die Einheit des Geisteslebens in Bewusstsein und That der Menschheit), Մեծ մտածողների հայեացքները կեանքի մասին (Die Lebensanschauungen der grossen Denker), Մաքառումն կեանքի մի հոգեւոր բովանդակութեան համար» (Der Kampf um einen geistigen Lebensinhalt), որոնք բոլորն էլ իդէալականութեան նոր հիմնաքարեր գտնելու փորձեր են: Մենք կամեում ենք ծանօթացնել նրա նորագոյն (այս տարի լոյս տեսած) կրօնի բովանդակած ճշմարտութիւնը» (Der Wahrheitsgehalt der Religion) մեծածաւալ գրութեան հետ, որ սիրով ողջունուեց Գերմանական մամուլի խորից և համարուեց առաջին նշան մինչև այժմ միմեանց "դէմ" թշնամական գիրք բռնած փիլիսոփայութեան ու կրօնի հաշտութեան համար: Բացի յիշեալ գրութեան քիչ քանակի տակ ունենք նոյն փիլիսոփայի մի փոքրիկ բանախօսութիւնը, որ նա արել է սոյն տարուայ Ապրիլի 17-ին Վեմինցում՝ նոյն խնդրի մասին, և որը միայն մի սիրուն համառօտութիւն է մեծ գրութեան, որոնցից և գլխաւորապէս օգտուում ենք ու մեծաւ մասամբ նրա մտքերը հարադատաբար տալին:

Այն մեծ բաժանումը, որ ցարդ եղել է կրօնի և փիլիսոփայութեան մէջ, Օյկէնն ընդունում է իրրեւ անքնական, որովհետև նրանց երկուսի նպատակը և մտամբ նիւթը մի և նոյնն է. մի փիլիսոփայութիւն, որ իւր միջից արտաքսել է կամենում այն խորին խնդիրները բացարձակ ճշմարտութեան և հոգեւոր ինքնապահպանութեան (Geistige Selbsterhaltung) պրոբլեմները, որոնք նկատուած են իրրեւ կրօնի թոյլ կողմը, չի կարող ապահովել իրեն անկումից, դէպի մի դատարկ ու անմիա բովանդակութիւն: Ընդհակառակն եթէ կրօնն ուղեկայ իւր բոլոր յարաբերութիւնները փիլիսոփայութեան հետ կարելի ոչ միայն կլնատէ իւր ազդեցութեանը կեանքի ամբողջութեան վրայ, մերժելով մարդկային քաղաքակրթութիւնը, այլ և կստանայ չափից աւելի անասնային աշխարհի ու շնչին կերպարանք:

Կրօնն էլ, փիլիսոփայութիւնն էլ հակառակում են իրրեւի առօրեայ ըմբռնման ու գործադրութեան. երկուսի էլ նպատակն է եւանդուն մարտամտք հնի տեղ մի նոր աշխարհ հաստատել: Փիլիսոփայութիւնը տեսնում է թէ ինչպէս քանի դնում գործնում է կրօնը և իւր բարերար ազդեցութիւնն աւերացնում թէ ինչպէս դեղեցիկ գրականութիւնը օր աւուր աւերացող լրջութեամբ կրօնական խընդիրների բացատրութեամբ է զբաղւում. երաժշտութիւնն ու արուեստը նրանից են վերցնում իրենց նիւթը և պէտք է նրան իւր ազատ տեղը տայ: Կրօնն ու փիլիսոփայութիւնը ոչ թէ իրրեւ հակառակորդներ պէտք է գործեն, այլ միացած, թէ և տարբեր ծանապարհներով զիմելով դէպի ընդհանուր նպատակը, առանց հարկաւ իրենց առանձնայատկութիւններն ու անկախութիւնը կորցնելու:

Մինչ կրօնը սիրոյ ու շնորհի թագաւորութեան յայանութիւնը, իրրեւ մի մեծ աշխարհածաւալ իրականութիւն՝ ներկայացնում է պարզօրէն մարդկութեան առաջ փիլիսոփայութիւնը սկսում է փոքրից և միայն կամայ կամաց հասնում այնտեղ, ուր կրօնի մտտուցած իրականութիւնը իւր սեպհական ձգտման համար էլ անհրաժեշտութիւն է նրկատուում: Փիլիսոփայութեան ծանապարհն այսպիսով աւելի ընդարձակ է և բազմազան, որ սակայն իրեն յատուկ առաւելութիւններն ունի կրօնի անհրաժեշտութեան հաստատութեան համար:

Կրօնի համար անշուշտ էական է մի նոր ներկայիցս բարձր աշխարհի գոյութիւնը, սակայն լոկ որ և է իրականութեան գոյութիւնը դեռ շատ քիչ է կրօն յառաջ բերելու համար: Եւրոպականներն էլ ընդունում էին աստուածային էութիւնների գոյութիւնը, սակայն նոցա ոչ մի դեր չտալով մեր աշխարհում՝ մերժում էին կրօնը, չբերելա Սպենսերի ընդունած իրրեւ անքնական հիմունքն ևս աւելի կրօնի բացատրութիւն է, քան թէ հաստատութիւն: Այստեղ ոչ միայն էական է նոր աշխարհի գոյութիւնը, այլ գլխաւորապէս նրա յարաբերութիւնը մեզ հետ, նրա կենդանի ներկայութիւնը մեզ կարելից աղատելու և մի նոր կեանք ձեռք բերելու համար:

ի՛նչ օգուտ մեզ այն բոլոր իրերը որոնք թէ և ինքն ըստ ինքեան կանս սակայն մի գործունեայ «Բեզ համար» չեն դառնում:

Գերբնական աշխարհի կենդանի ներկայութիւնն ու գործունէութիւնը մարդկութեան մէջ ահա թէ ինչն է կրօնի համար էական: Ինչպէս պէտք է ապացուցանել այս: Հնումը երկինքն ու երկիրը իրենց համապատասխան ու ներդաշնակ կարգաւորութեամբ բաւական էին Աստուծոյ գոյութիւնը ապացուցանելու համար: Սակայն այս ԺԲ. դարու հայեացքը մեզ համար հնացած է. քննական փիլիսոփայութիւնը և բնական գիտութիւնները զգուշացնում են մեզ հեշտութեամբ բնութեան ոյժերի և գերբնական ազդեցութիւնների մասին փձիւ աալուց. որակ է վերջանում բնութեան կարողութիւնը և ուր սխալում գերբնական ներգործութիւնը՝ անկարելի է որոշել: Կրօնն ինքը ցոյց չէ տալիս մեզ այն միջոցը որով մենք այս հաստատել կարողանայինք: Անպէտք է նաեւ այն միտողը որ կրօնն ու գիտութիւնը իրրեւ իրար թշնամի ներկայացնելով, մի կի գոյութիւնն ու ծագկումը միւսի ոչնչացումն ու վնասն է համարում: Այդ նորատակի համար ամենից աւելի յարմարութիւն ունի փիլիսոփայութիւնը որի աճողը բովանդակութիւնը մարդու և մարդկութեան հոգեւոր ու մտաւոր կեանքն է: Այստեղ ոչ թէ եզրակացութիւններն են իշխում, այլ անմիջական իրականութիւնը փորձառութիւնը (Erfahrung), որ մեզ համար և մեր մէջ գործունեայ է:

Սակայն զոյշ պիտի լինել այս գէպքում մի աւելի մեծ փորձանքի՝ ենթակայականութեան (Subjectivism) մէջ չընկնելու համար: Անմիտ բան կլինէր բարձրագոյն աշխարհի ընդ նմին և Աստուծոյ գոյութիւնը՝ հաստատել ու հիմնել աշխատել մարդու ներքինից: Այդ նոր աշխարհը յառաջ չէ գալիս բնութեան ոյժերի աստիճանաբար զարգանալուց, ոչ էլ մարդն իրրեւ անհատ կամ կապուած ուրիշների հետ պատմական-ընկերական կենսակցութեամբ կարող է նոր կեանքի ստեղծող լինել, ինչպէս թուում էր ԺԲ. դարու շատ փիլիսոփաներին: Կա պարզ ի պարզոյ մի հակառութիւն է: Եթէ այդ ընկերական միութիւնները բնութեան

մէջ են լինում և գործում լոկ բնական ոյժերով, այն ժամանակ պարզ է որ այդ աշխատանքի բոլոր միացումներից ու գումարից մի էապէս այլ կեանք յառաջ գալ չէ կարող, իսկ եթէ նրա մէջ գործում են գաղանապէս նաեւ այլ գորութիւններ ու կարգեր, զրանով ընդունում է գերբնականի իրականութիւնը:

Ամբողջ խնդիրը պարզում է այս կերպ, կամ հոգեւոր կեանքը իւր բոլոր երեւոյթներով ու մասերով միայն լոկ ստուեր է, որ խիստ ճշմարտութեան առաջ դիմանալ չէ կարող: կամ թէ չէ, նա մի նոր անյայտ աշխարհի բացատրութիւն, երեւոյթ ու յայտարար է: Արանով ընդունում է այդ աշխարհի իրականութիւնը և մարդ դիմում է գէպի կրօնը որը միայն նորան իւր անհրաժեշտ անկախութիւնն ու վեհութիւնն է, շնորհում ընդդէմ ներկայ կեանքի: Մարդկութեան պատմութիւնը մի փառաւոր ապացոյց է վերեւ ասածի, որովհետեւ ներկայացնում է անընդհատ կոխ մի իսկական անկախ հոգեւոր կեանքի մարդկային փորքամտութեան ու չընկնելութեան դէմ, որ ուզում է բարձրը խոնարհեցնելով իրեն հասցնել, իւր նպատակին ծառայեցնել, բայց որը նրան երբեք կատարելագէս ու վերջնականագէս չէ յաջողում: Աւր որ քաղաքակրթութիւնը բոլոր կապը այդ աշխարհի հետ կտրել և մարդկութեանը միայն ներկայ կեանքը ցոյց տալ և նրանով բաւականանալ սովորեցնել աշխատեց՝ ընկաւ և անբովանդակ դարձաւ:

Հոգեւոր կեանքը և կրօնը՝ ընդհանուր մարդկային խիստ սերտ կապուած են իրար հետ, առաջինը մղում է մարդուն գէպի երկրորդը՝ միայն չնչին ու անպատու բնութիւններն են կրօնը ամենայն սառնութեամբ ու խտուրթեամբ մերժել: Սակայն հոգեւոր կեանքը, աստուածայինը միշտ յաղթական կերպով չէ ընթանում. ոչ միայն արաւքին աշխարհի երեւոյթներն են նրա ճանապարհը փակում, այլ և հենց իւր մէջ հակառակող տարրեր ունի նա. խոհականութեան հետ հանդէս է գալիս անխոհականութիւնը և սպառնում ոչնչացնել նրան, ստորինը շատ անդամ յաղթահարում է վեհին, բնական ձգտումները

հոգեւոր ոյժերին, մարդկային եռականութիւնն ու անարդարամտութիւնը հոգեւոր կեանքի բարիքներին: Այո՛, մարդկութեան միջ հոգեւորը վտանգի է ենթարկուած. չարը իւր թուլութիւնից բարձրանում է և իրրեւ մի իրական զօրութիւն հակառակել է սկսում բարուն, մինչև իսկ յաղթահարում է նրան և աստանայական ուրախութիւն զգում իւր աւերածի վրայ: Շատ դժուար թէ մարդկութիւնը այնքան զբաղուէր աստանայի բնութեամբ ու կերպով, եթէ հէնց մարդկային բնութիւնը զրա համար առատ նիւթ չտար: Այսպիսի խռչնդոսների և անդունդների առաջ ընկնում է մարդը և լսի մարդկայինը իւր անզօրութիւնը խոստովանում: Սորա վրայ աւերանում է նաև այն միզապատ խաւարը, որ մեր ճակատագիրն է շրջափակում. մի շնչին կոյր արեւած, մի անբայատրելի զարհուրելի պատճառ իշխում է կեանքի վրայ՝ ոչ արդարութեան կարգն է երևում և ոչ էլ սիրոյ իշխանութիւնը: Հասկանալի է, որ այսպիսի զրութիւնը շատերին գէպի յոռեաեռութիւն (Pessimism) է տանում: Սակայն այդ կեանքի վերջարան լինել չէ կարող: Յաւր, տանջանքը հէնց նրա համար աւելի դառն է, դառնում մեզ համար, որովհետեւ բարին առաջներս է, բայց իրականութիւն չէ, դանում. մենք ճիշտում ենք, շարժում ենք գործում ձեռք բերելու այն սակայն մեր գործողութիւնները շեղում են և աննպատակ մնում: Վտանգի միջ կզաւր կամ կորածը պէտք է մեզ համար որ և է, զին ունենայ, եթէ նրա կորուստը մեզ ցաւ է պատճառում: Եթէ բարին ոչ թէ իրականութիւն, այլ լսի ստուեր լինել, այն ժամանակ ցաւն ու կսկիծը իրենց ճշմարտութիւնն ու ոյժը կկորցնէին: Բայց իրօք այդպէս չէ, մենք տանջում ենք յիւրախ, որովհետեւ կեանքի իսկական բարիքներին հասնել չենք կարողանում. ուստի կեանքը իրրեւ զուտ չարութիւն ու տանջանք մերժել ու ոչնչացնել, ինչպէս այդ անում է յոռեաեռութիւնը, կարելի չէ. դա հակառակութիւն կլինէր:

Մի և նոյն ժամանակ բարեւոյ կատարեալ հաստատութեան համար մենք ու մեր աշխարհը ակար ենք: Կենք է մնում ուրեմն անել

մեզ, եթէ երկուսն էլ մեզ համար անկարելի են, իսկ միւս կողմից կեանքի անհրաժեշտութիւնը և ապրելու հոգսը ստիպում է մեզ շատապով վճիռ տալ:

Այստեղ արդէն հասնում ենք այն կէտին, ուր միայն իսկապէս առած, կրօնի կարիքը խիստ զգալի է դառնում, որ մենք մի փոփոխութիւն սպասում ենք բարձրագոյն ոյժի և բարութեան միջոցաւ. միայն մեր աշխարհից բարձրն ու վսեմը՝ հոգեւորն իրրեւ մի ամբողջութիւն, կարող է այդ փոփոխութիւնը յատաջ բերել և դրանով մարդուն կեանքի մի նոր, խորհուրդ ու վեհութիւն շնորհել, դրանով դառնում է հոգեւորը մեր իսկական եսը և անձնաւորութիւնը. իսկ հոգեւոր կեանքի կատարելագոյն սրակը կրօնն է:

Բոլոր կրօնների նպատակն է մարդուն Աստուծոյ հետ սերտ յարաբերութեան միջ մտցնել և նրան առօրեայ հոգսերից ու կարիքներից բարձրացնել. սակայն նրանց բովանդակութիւնն ու որակը ի հարկէ խիստ բազմազան է ու տարբեր: Ամենից առաջ նորաբաժանում են երկու տեսակի. օգէտի և վերկութեան կրօններ: Առաջինների նպատակը չէ հիմքից նոր մարդ պատրաստել, աշխարհի խառնիճաղանձութիւնը նրանց համար դեռ այնքան մեծ չէ, որ յոյս չունենան որոշ օրէնսդրութիւններով նպատակին հասնելու, առանց որ և է մեծ յեղաշրջման. վարձն ու պատիժը բաւական է համարում այստեղ, որպէս զի մարդուն ստիպեն իւր սեպհական ոյժերով արդարն ու իրաւային գործել:

Փրկութեան կրօնների համար խնդիրը բոլորովին այլ է. նպատութեան բոլոր յոյսը կազուած է այստեղ մի ամբողջական ներքին յեղաշրջման հետ. այստեղ նոր աշխարհի համար նոր մարդ է հարկաւոր:

Փրկութեան կրօնները երկու են. Բուդդայականութիւն և Քրիստոնէութիւն:

Բուդդայականութեան բոլոր ոյժը նրա վճռական մեթոման միջ է, նա մեթոմ է կեանքը իւր բոլոր չարիքներով: Նւ այս բոլորն է: Գլխաւորը որ պահասում է այստեղ՝ այն է, որ նա չի կարողանում չարիքը յաղթահարելու ու բարին ձեռք բերելու ոյժը ներշնչել: Այդ պատճառով Բուդդայականութեան վերջին

խմաստուն վճիռը մնում է՝ ըստ կարելւոյն դադարեցնել գործունէութիւնը և ոչնչացնել դէպի գործունէութիւն դրդող եռանդը (Energie):

Այլ քրիստոնէութիւնն իւր ամբողջութեամբ ճանաչում է, — ոչ ի հարկէ զանազան հասկացողութիւններին ու կեանքին յարմարեցրած ու ստորացրած քրիստոնէութիւնը, — նա կնկատէ այնտեղ մի հսկայական մերժումն ու վճռական բացասութիւն՝ ոչ թէ կեանքի և հասարակական կազմակերպութեան այս կամ այն կէտի, այլ նրա ամբողջութեան հաւասարակէտ: Սակայն այս բոլոր ոչնչացումից և սուերից յետոյ, այդ ծանր պայքարից յետոյ, նա էլի գտնում է նոր կեանքի ծանապարհը, որ նրան դէպի մի նոր աշխարհ է տանում, ուր Աստուծոյ արքայութիւնը, անվերջ սէրն ու շնորհն են իշխում:

Բայց հակասութիւնը միայն յաղթահարուած է այստեղ, ոչ թէ ոչնչացած. ընդհակառակն այժմ տանջանքն ու խաւարը աւելի դառն ու անտանելի են դառնում՝ նոր աշխարհի վեհ իրականութեան պարզուելով, և միւս կողմից նոր կեանքի երանութիւնը ևս առաւել մեծ է դառնում, որչափ ցաւալի է շրջապատող կեանքը: Մարդկութիւնը մնում է սրանով երկու ծայրայեղ հակասութիւնների մէջ, տարուբերում է մէկից դէպի միւսը. աշխարհի կարգը դրանով է փոխւում, բայց մարդու ներքին ճնշումը արդէն վերացած է և վեհութեան ծանապարհը բաց նրա առաջ:

Նոր, աստուածային յարաբերութեան վրայ հիմնուած աշխարհի հանդէս դալը այլ ևս ոչ մի կասկած չէ թողնում յաղթութեան մասին. հերոսութիւնը, որ այստեղ աւելի է պէտք մարդուն, քան որ և է այլ տեղ, ստանում է իւր ամուր հիմունքը, և հակառակ բոլոր ահալի «Այ»երի դուրս է պրծնում մի ուրախ «Այո» մարդկային կրճէից՝ կեանքի համար:

Սակայն քրիստոնէութիւնը այս բոլորը իբրև լոկ վարդապետութիւն չէ քարոզել, այլ տիեզերական-պատմական աշխատանքով ու ծանր մաքառմամբ՝ արտաբուստ աւելի դորեղ օյժերի դէմ, մի իրականութիւն է զարձրել,

որն ազդեր ու ժամանակներ ի ներքուստ սերտ կերպով կապում է և իւր ամբացնող ու բարձրացնող օյժով նաև անհատներին առ ինքն է քաշում, միշտ վստահների ու փոթորիկների ժամանակ իւր ապաստանարանը իւր ուսուցչի Զիսուսի արտասովոր անձնաւորութեան մէջ որոնելով. նա իւր հերոսի մարտումների, տանջանքների և յաղթութեան շնորհիւ նոր կեանքի իրականութեան անդրդուելի համոզումն է կազմել, իւր վարդապետի մէջ այդ կեանքի հրաշայի վեհութիւնը գիտել, առանց ի հարկէ մոռանալու այս աշխարհի խորտակիչ ողբերգութիւնը, որ միայն ամենապատն տանջանքից ու ամենածանր զոհողութիւնից յետոյ աստուածայինին ու հոգեւորին յաղթանակ է շնորհում: Այսպիսով քրիստոնէութիւնը՝ կեանքի ուրախ և յաղթական վերջաբանի հետ, այնու ամենայնիւ նրա մեծ լրջութիւնն է ներկայացնում: Այս բոլորով քրիստոնէութիւնը ներկայանում է մեկ ոչ թէ իբրև մի կրօն առհասարակ, այլ նա կրօնների կրօնն է և յաւիտեական ճշմարտութեան մարմնացումը. նա մի ժամանակաւոր գործողութիւն չէ, այլ մի մնայուն ճշմարտութիւն՝ մի բան, որը ոչ մի յեղաշրջումն կործանել չէ կարող, որը ժամանակի յատաժ բերած բազմաանակ փոփոխութիւնները միայն աւելի ամրասնդել կարող են:

Քրիստոսի քարոզած և նրա անձնաւորութեան մէջ կենդանի Աստուածը մի զօրութեան ու սիրոյ Աստուած է, որ նոր աշխարհ է ստեղծում, նոր էութիւն տալիս աստուածային կեանքին հաղորդակից անում, և դրանով մարդուն մի անջնջելի արժէք շնորհում. այդ Աստուածը կպահպանէ մարդոց մէջ նոր կեանքը, նրա հոգեւոր արմատը կսնուցանէ և բոլոր վստահների դէմ կպաշտպանէ:

Ինչքան կուզէ թող սցնուհետև արտաքին աշխարհը մնայ ինչպէս էր առաջ՝ հակառակութեան ու խաւարի մի վայր, թող ներքին ու արտաքին արդեւքները շարունակուին ու մարդուն իւր հոգեւոր կարողութիւնների հետ նեղեն, և ըստ երեւոյթին ոչնչացնեն. թող ամեն ինչ այստեղ ի դուրս ելորած թուի, այնու ամենայնիւ նոր կեանքի

և նոր աշխարհի հանդէս գալով ամէն ինչ յեղաշրջութեամբ է արդէն և խաւարի բոլոր անգունները միայն լուսոյ արեգակնային պայծառութեան զգացմանը կնպատանեն և մինչև իսկ չարք ստիպուած կլինի միայն բարու զարգացմանը ծառայելու:

Այս բոլորը տարիս է մեզ քրիստոնէութիւնը ուստի և մենք նոյն իսկ փիլիսոփայական տեսակէտից ամենակատարեալ բաւականութիւնը գտնել կարող ենք նորա մէջ: Այս մենք կարիք չունինք նոր կրօնի քրիստոնէութիւնն է իսկական կրօնը:

(Ընթերցողը թող չմոռնայ, որ այսպէս խօսողն Աստուածաբան չէ, այլ 2-րդ դարու նշանաւորագոյն Վերմանական փիլիսոփայներից մէկը):

Սակայն Սիկներ այստեղ կանգ չէ առնում. նա ի նկատի ունենալով ժամանակի և քաղաքակրթութեան փոփոխութիւնը, անհրաժեշտ է դանում քրիստոնէութեան միջից հանել այն, ինչ որ ժամանակաւոր է, և միայն անմահն ու մնայունը թողնել, որպէս զի աւելորդ հին ձեւերը գայթակղութեան և փոքի բար չգտնան շատերի համար և ստոյններ քրիստոնէութիւնից: Շատ բաներ կրնի մէջ առնւմ է նա շնորհիւ կեանքի քաղաքակրթութեան ու պահանջների փոփոխման՝ երևում են փոքր մարդկային ու ժամանակաւոր այն ինչ որ մի ժամանակ լիովին բուսականութիւն տալ կարող էր բոլոր պահանջներին, այժմ դատարկ ձև է դարձել և պիտի անհետանայ: Քաղաքակրթութիւնը այդ պահանջում է, և պէտք է բաց ձուլատու իրերին նայել ու ճշմարտութեան համար կռիւն սկսել: Ի դուր այդ պայքարը շատերին իրեն կրօնի համար վտանգաւոր է երևում, ընդհակառակն այդ մարտումը առիթ կտայ աւանդական տաղանդը նոր եղանակով կազմակերպելու յօգուտ կրօնի փոքրագութիւնն ու անհատութիւն է այդ կուռից խոյս տալը: Եթէ մեր անդրդուելի համոզմունքն է, որ քրիստոնէական կրօնի մէջ հոգի որ իրականութեան ամենատարբեր յայտնութիւնն է իշխում, այն ժամանակ թող քաղաքակրթութեան աշխատանքի այլ և այլ փոփոխութիւնները մեզ մարդկանց համար աշխատանքի ու հոգսի

դուռ բանան, իսկական գործին նորա միայն օգնել կարող են՝ նրա վեհութիւնը և սքանչելիութիւնը աւելի լուսաւորելով, որովհետեւ մի ճշմարիտ յաւիտենական բան չի կարող ժամանակի մէջ կորչել, այլ նրա մէջ մըտնելով, յաղթում է նրան:

եր. Սր.



ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԻՐ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՎ ՈՒ ՀԱՄԱՅՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Ուրանալ մարդկային բնութեան պաւսաւորութիւնը, աչք գոցել բարոյական ակներեւ մոլութիւնների և ախտերի դիմաց, և, մի և նոյն ժամանակ, վերագրել իրեն մեծամեծ առաւելութիւններ՝ երեւակայել որ ինքը բարոյական գերազանց յատկութիւններ ունի, — այդ տարօրինակ և միանգամայն անըմբռնելի կուրութիւնը այնքան յատուկ է մեր ժամանակի ոգուն, որ իրաւամբ նրա յատկանիշը պէտք է համարել Իրաւ է, չեն պակասել երբէք թեթեւամիտ մարդիկ, որոնք մարդկային բնութեան նկատմամբ ոչինչ չէին կամենում իմանալ, եղել են և մօրի մարդիկ, որոնք զգուշի անտարբերութեամբ դէպի իրենց հոգեկան բարոյական կեանքը՝ գերի են եղել իրենց անասնական հակումներին, անպակաս են եղել անամօթ մարդիկ, որոնք լրբաբար արդարացում էին մարդկային կեղտոտութիւնները, սակայն այդ բոլորի հետ մէկտեղ ամէնքն էլ վկայել են, որ մարդս կրում է իւր մէջ մի ինչ որ տարբեր՝ մի բնազդ, որը հակառակում է իւր լաւագոյն հատկացողութեան, իւր լաւագոյն եսին, որ այդ բնազդը ծնում է մեղքեր ու յանցանքներ և ընդունակ է արտագրելու անբարոյականութեան այնպիսի ոճիրներ, բարոյական կեանքի այնպիսի այլանդակութիւններ, որոնց հետանկարն անգամ չէ կարող տալ ոչ գրիչը և ոչ վրձինը:

Մեր ժամանակներին միայն վերադա-